

Ուստի ցանկալի է Ա.) որ աշակերտները ուրիշ զգքեր չունենան՝ բացի նորացից՝ որք նոյս զառատան մէջ ընդունած են, և Բ.) որ այդ զգքերի պարունակութիւնը լինի միայն բոլոր այն՝ ինչ որ զուտ էական մասն է ուստի նիւթի մէջ :

(Յ ա ր ո ն ա յ ք ի մ է)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԵՐՄԱՆԻԱՆ
ՄԱՆԿԱՎՈՐ ԺԱԿԱՆ Ժ Ո Ղ Ո Վ Ը
Ի ԲԵՌԵՒՆ

(Յ ա ր ո ն ա յ ք ի մ է)

Պ. Զայֆարիմի դէմ խօսեց Պ. Շեփեր Քեռլինցին, որ առաջ մանկավարժ էր, յետոյ Աստուածաբան դարձաւ և այժմ Քեռլինի աղատական ընկերութեանց քարոզիչն է, նորա խօսելու ժամանակ Պ. Նախարարը հեռացաւ դաշիճէն:

Պ. Շեֆեր. — Ժողովիս մէջ խոռվութիւն ձգել չըկամիմ, այլ Վարժապետի խօսքերը միտս բերելով՝ կասեմ, — ո՞չ եկի խաղաղութիւն արկանել, այլ սուր, սուր արդար զործի համար, Պատուելի նախորդիս մօքերը չեմ կրնար ես ընդունել: Վրուարին մի իրողութեամբ արդէն մեք հակառակ եմք միմեանց. նա առաջ Աստուածաբան էր և այժմ մանկավարժ դարձաւ, իսկ ես մանկավարժ էի առաջ և այժմ՝ Աստուածաբանութեան ձեռն արկի՝ կեանքը ստիպեց զիս այդ անեղու: 1849 թուականէն մինչև 1856 թ. վեց տարի վարժապետ էի ես ստորևակարդ մի դպրոցի մէջ, բայց Պրուսիան և եռողյամիլիներու (*) տակ պաշտօն վարելու ախտիքական վիրջապետ հատաւ, ևս իմացայ, թէ ի՞նչ զառն լուծ գրուած է վարժապետի վրայ . . . (անհանդապուակն է): Պարոնայք և ընկերը

(*) Այդպէս կը կոչուին Պրուսիայ դպրոցական օրէնքները, որք իրենց յետադէմ ուղղութեամբ ներկայ ժամանակին ուղղին այլ եւս չի համապատասխանելով, արդէն փոխուելու վրայ են. 1848 թուականէն յետոյ օռթօգուկո հոգեւորականներն ու Ռէակուուններ կառավարութիւնը կամեցած էին այդ օրէնքներով աղդային վարժաբանը ո՞րքան կարելի է, ճընշել:

իմ, ես ունիմ իրաւունք այդ առելու — (մէջ ունանալունիւն, սուսըուն + ու բառացինելը. Նախարարունիւնը ըստի էլ հարիսնել):

Նախարար. — Պարոնայք իմ, նախ և առաջ կը խնդրեմ հանգատութիւն պահպանել, ինչու որ ժողովին մէջ միշտ սովորութիւն նղած էր. և ապա կը խնդրեմ յարգելի Ատենախոսէն, որ նա իր հակարաններու գէմ աւելի մեղմու խօսի:

Շեֆեր. — Առանց հակառակութեան ձշնրիտ կեանք չըկայ: Մեծարգոյ նախորդս ասաց, թէ մեք միաք չունինք եկեղեցական զործներու մէջ խառնուելու, այլ միայն մանկավարժութիւն կը ցանկալի ուսանել: Խոկ ես կասեմ — մանկավարժութիւնը նիւթապէս և բարցապէս այնպէս սերտ կապուած է եկեղեցւոյ հետ, որ մեք կարող չենք մեր աչքերը փակել և չըտեսանել, թէ ի՞նչ կանէ եկեղեցին, ի՞նչ կըպատահի նորա մէջ և ի՞նչ զիրք կըբռնէ մեզ գէմ: Ի զուր է կարծել, որ մեք վտանգէն զերծուած կըլինինք, եթէ ջայամ թանոյ նման զլուխներս աւազի մէջ խռենիք ու մտածենք, որ եթէ մեք վտանգը չենք տեսներ, ուրին իրօք ապահովինքի, Մեք զումարուած ենք այս տեղ Գերմանացւոց մանկավարժից մոդերը ազատ հռչակելու և այդ պատճառուվ իմ վճռիս վրայ ես հաստատ կըմնամ:

Նձմէն առաջ Պ. ատենախոսը մի հարց արաւ, թէ ի՞նչ կըցանկայ Գերմանական մանկավարժութիւնը և պատուսխանեց. — Կրթումն մարդկային ընդունակութեանց աստուածատուր որոշմանը յարմար, Այդ բանին ես ևս համաձայն եմ, միայն կը ցանկայի, որ ասուեր — Բնատուր մարդկային որոշմանը յարմար (ըստ Հայութիւնիւն և հաւանականիւն), նա կըկնեց նշնովէս — (անհանդապուակն է):

Նախարար. — Խո կըլինքիւմ, որ դուք թոյլ տաք յարգելի ատենախոսն իւր 10 ըսպէս ազատ գործադրելու:

Ատենախոսը շարունակելով — Խա ասաց նոյնպէս, որ մեք չըկամինք վիճաբանել զաւանական գպրոցի և զարոցի ու եկեղեցւոյ բաժանմանն վիրայ, որովհետեւ գոքա արդէն վճռած ինզիրներ են: Վայ մեզ, ընկե՛ք իմ եթէ մեք այդ կարծիքն իրօք ընդունինք Ամբիոնիս վրայ խօսք եղաւ Պրուսից ու Գերմանական մանկավարժութեան

մասին — կարեոր խնդիր: Բայց մեծարգոյ առևնուականը Պրուսիոյ մանկավարժական պատմութիւնը մուշէ մինչեւ Ֆրիդրիհոս — Ալի՛չելմ Գ. Թագաւորի մահը նկարազրեց (Հաւանութիւն): Միթէ հարկ չէ՞ք իշել, թէ ինչը կրեցինք մեք այն ժամանակէն սկսեալ, թէ ի՞նչ անհաշտ դիբը առաւ Պրուսիան դէպի մեր մանկավարժութիւնը Այս մի իրողութիւն է, այս մեք ամենքս ցաւով կըզգանք, թէ և չուզենք արտասանել, որ Պրուսիան Այսի հօրն Մինիստրի օրերով Գերմանական մանկավարժութեանը հրաժարիմք խասաց (Բառակ): Մի իրողութիւն է, որ Ռատումը Մինստրի ժամանակ դպրոցի վրայ շղթաներ դրաւ (Հաւանութիւն): Ուրախալի մի երեսը է նաև, որ մեր կառավարութիւնը արդէն սկսած է խորշիլ այդ կորստարեր ճանապարհէն (Բառակ) և դրա կենդանի վկայն աւասիկ մեր ժողովն է: Ուրեմն շնորհակալ լինիք ՚ի սրտէ այն աղնիւ մարդիկներէն, որք այդ բարի փոփոխմանը ձեռնոտու եղան:

Աժմ քանի մի խօսք Գերմանական մանկավարժութեան մասին: Մի անգամ ևս զատապարտուեցայ տէրութեան կողմէն, որովհետեւ կատէի, թէ մեր զատիւարակութիւնը տան, դպրոցի ու եկեղեցւոյ մէջ խութենէն (Էզօիզմ) սկիզբ կառնէ և առ խութիւն կըդիմէ: Ինձ կըթուեր, թէ մեղմ խօսած էի, այժմ կ'աւելցնեմ, որ դա վայրաբարշ, նուաստ եսութիւն է: Այս և աղնիւ եսութիւն, բայց իմ ակնարկածս այդ տեսակէն չէ: Նա նուաստ է, ըստ որում մեր կենսական նպատակը յայնիւս կըդնէ և ոչ յոյսկոյս մեր կենաց (Հաւանութիւն ընդհանուր, առաջնական, Բառակ): Ուսուցիչք, որք հանապաշ երկնքի ու զժոխոց վերայ կակնարկեն մանուկներու առջև, մանկավարժական սկզբունքները կ'ուրանան, նոցա դէմ ուխտազրուժ կըհանդիմանաւ՝ ն (Դաշտական ու Բառակներ, առջուկ, զննիւ դաշտական իւնիք):

Հախուան: — Մեծապատիւ պարոնայք, վերստին կըխնդրեմ, որ դուք Զեր հաւանութիւնն ու տհաճութիւնը քիչ մը զսպէք և կատարեալ աշխատութիւն շնորհէք պարոն ատենախօսին:

Եթէր: — Իմ ասածս դուք կարող եք առ ինչ դնել, եմէ նոյն սկզբունքներն արդէն կեր-

պարանք, արիւն ու մարմին ստացած չըլինեին աղատակրօն ընկերութեանց մէջ, որք նոր ապագայ շնորհէլու են Գերմանական զարոցին (Հաւանութիւն և բառակ):

Պ. Ըեփերէն ջոկ ուրիշ անձննք ևս խօսեցին վասն և հակառակ նմին Զայեարթի, որնոր կրկին ամպին ելնելով յետագայ վեջարանութիւնն արաւ:

Զ. Կառը: — Խնձմն ևորը խօսող յարդեղի պարունիերէն առաջինը նկատեց, որ ևս Պրուսիոյ մանկավարժական գործունեութեան նկարաղիրը թերատ թողուցի, այդ իրաւ է: Յետոյ նա ասաց, —, Աւ Խատուածաղիր որոշման, այլ բնադիր որոշման՝ յարմար, Դէ՛չ, պարոնայք, ևս թոյլ կըսամ, որ ամեն մարդ ըստ Բւր Քառակ երջանիկ գառնայք*: Նա աւելցուց ևս, որ Գերմանական մանկավարժութիւնը այս կեանքիս սահմանէն վեր ու գուրս չի երթար: Պարոնայք իմ, եմէ Գերմանական մանկավարժութիւնը Պեստալոցցիէն սկիզբ կ'առնէ, ուրեն մեծարգոյ ընդդիմադրանս թո՛ղ Պեստալոցը զրուածքը հետազոտէ ու կարդա, որ Աստուծոյ մանկունքը անմահ էն և մեր մարմնոյ վախճանը զեռ մեր կեանքիս վախճանը չէ: Եթէ այս երկրաւոր կեանքիս հետ մեր զյութիւնն ևս կը վերջանայ, ուրեմն յախտենական նպատակի բարձրագոյն կատարելութիւն չըկայ, ուտենք ու խմենք ուրեմն, զի վազը մեռնելու ենք: Քա՛ւ լիցի, այդպիսի մաքեր չուներ մեր մանկավարժութեան հայրը, Պեստալոցցին (Հաւանութիւն):

Ա. Ջմ հանդիսականք սկսան ունին գնել նաև նախագահ Թէկողոր Հոփֆմանի պատուական ձառնին, որ ընտրած էր այս թնարան: ՊԳիսութիւնը ու նորա վարդապետին ազատ է**: Պարզ ու որոշ՝ առանց ունայն պերճարանութեան մէկնեց նա, թէ ի՞նչ պահանջմանք ունի ազդի մանկավարժական զիտութիւնը: Մանկավարժութիւնը պէտք չէ օտար զօրութիւններէն կախումն ունենայ: Ալէտք է որ նա ինքնուրոյն՝ միայն փորձուած ման-

(*) Այդ Յարիդիկոս մեծի խօսքերն են: Փ. Վ.

(**) Հին Գերմանական, քուն աղդային որոշումն է, որ պէսսէն օրինագրքերու մէջ եւս ընդունուած է, թէ եւ երրեմն անզործագիրի մնալով: Փ. Վ.

կավարժներու ձեռքով կարդագրուի և առաջ-
նորդուի ԱՇ աստվածարանը ունի իրաւունք
անգառնայի վճռ հատանելու գարցական գոր-
ծերու մէջ, ոչ լեզուագէտը, բանագէտը, բժիշկը
ու տէրունական անձը իր միակողմանի հայեաց-
քով: ԱՇ մի քաղսպական կամ կրօնական դաս
կարող չէ իշխելու նորա վերայ, միայն մանկա-
վարժը, միայն նա, որ գաստիարակել դիտէ, կա-
րող է տնօրէն լինել գարցոցի մէջ: Մանկավարժ-
ներուն պէտք է ազատ զարդարման իրաւունք տալ,
վարժապետը կարող չէ չափէ դուրս բան սովորի-
բայց ոչ թէ ազատ զարդարման իրաւունք, այլ և
իրենց ուսածը ուրիշներուն հաջորդելու կառարեալ
ազատութիւն ևս պէտք է տալ մանկավարժներուն:
Ալ որ համարձակի պատուիրել վարժապետին,
թէ մինչև այս աստիճան միայն կարող ես հաս-
նել զարցաց մէջ, տղետ է Ոքան ևս արթուն
և ժրաշան լինի վարժարանի վարչութիւնը, այնու-
ամենայնիւ հարկ է, որ նորա ներըննարեկարգու-
թեան և յառաջադիմութեան համար հրապարա-
կութիւնը (լու որութեանու) անդադար հսկէ նորա
վրայ, և հանապաղ զրդում և զարկ տայ նորան:
Սակայն Պ. Հովհաննել թող ինքը խօսի:

Հայքի հանու - Բարձրապատիւ ժողով. այս օրուայ
ճառիս համար ընտրած խնդիրս շատ լրուն գուցէ
աւելորդ երկի, թէ զիսու Շիւնն և նորա վարդա-
պետութիւնը աղաստ է շատերու. կարծիքով միան-
գամայն ճշմարիտ է. մարդկային միտքը կարելի չէ
բանարարել. և ուրեմն նորա աղասութեան վրայ
զըսցելը միայն զուր ջանք է. Այսու ամենայնիւ-
ս հաւասարի եմ, որ այդ ճշմարտութեան վրայ
չիմնուած քանի մի հակիրճ ծանօթութիւններ
այս ժողավայրին անպատճէ չեն համարուիլ և գուցէ
իրենց գործազրութիւնը վարժատան մէջ կը դրտ-
նեն. Արդ՝ կը բող են զիս հարցնել, թէ մանկա-
վարժութիւնն արդեօք զիսութիւնն է. Է՞զ, մե-
ծարդոց պարոնայք, այդ մասին լաւ է ոչինչ չը-
խօսինք. ով որ չի հաւատալ, որ մանկավարժու-
թիւնը զիսութիւնն է, թո՞ղ հակառակը ապա-
ցուցանէ. Խակ ինձ և ընդհանրապէս բոլոր վար-
ժապետաց համար, որոց կիանքի խորհուրդը ման-
կունք վարժել է, նա զիսութիւնն է, փութաջան
աշխատանքով ուսանելի ծանրակշիռ զիսութիւնն

որոց վախճանական նպատակը ընդհանուրի բարձ
րութիւնն է ու նորա յանաջաղիմութիւնը եւ
արդ՝ եթէ կը համարձակիմ դիտնական ակումբիդ
առջև մի խօսք ասել մեր ուսման ազատութեան
մասին, գորանով չոկամիմ հաստատել, որ զպր-
ցի ու զպրցական կեալքի մջ առհասարակ
կարդ ու կանոն լինելու չէ. իմ պահշանջմունքս
բնաւ չի նշանակեր, որ տէրութեան վարժարան-
ներն առանց վերատեսչութեան, միսյն լոկ քմա-
հած բերմունքներուն զոհ պիտի լինին, ու մանկա-
վարժութեան ազատութիւնը քարոզելով ոչ այլ
ինչ ունիմ ՚ի մոտի, եթէ ոչ նորա անարգել զար-
գացումը յա՛տկապէս ժամանակիս պիտոյ քններուն
յարմար:

Հին ժամանակուայ կանօններէն շատերը մանակալարժութեան վերաբերմամբ մեր օրերուն այդ ևս համապատշաճ չեն, և ես հաւասարի եմ, որ մեր արդի ուսումնական հետազոտութեանց արգասիքն ևս առաջիկ ու կատարի ալ օրէնք չեն կրնար համարուիլ ամեն ժամանակներու համար. Ասելով՝ թէ մանեալարժութիւնը ինքնորոյն՝ ազատ պիտի ընթանայ, իմ միտքս միայն այն է, որ և օտար զօրութիւններէ չի պէտք է կախում ունենայ, և որ նա այլապէս չի պէտք է առաջնորդուի, եթէ ոչ իրմէն միայն յառաջացեալ օրէնքին երով.

Այս տեղ կը հանդիպիմ, այն խնդրոյն, որն որ
արդէն այսօր ժողովիս մէջ բարձրանալուն համար
զայն ոչ թէ քննել, այլ միայն միշտակել կը-
ցանկայի, այսինքն՝ դպրոցական հանգամանքնե-
րու կարգաւորելն ու մասնաւոր վարժարաններն
հիմնելու իրաւունքը պէտք չէ աստուածաբաններուն
յանձնել, եթէ նորա ընդ նմին փորձուած մանկա-
վարժներ չըլինին, Իմ՝ կարծիքով, պարոնայք,
լնցուագետներն ևս իրաւունք չըլինին օրէնսդիր
հանդիսանալ մանկավարժական սահմանի մէջ
(Ճանաչութեան), Հարունակելով Խօսք՝ ևս
կըպնդեմ, թէեւ ունկնդիրներուս առջև վէմ գայ-
թակղութեան զնելու երկիրդիւ, որ բնագէտներն
ևս ինքնակոչ իշխան են ազգային վարժարանի վե-
րայ, ևս այն մոքի տէր եմ նա և, - կըսեմ այս
ոչ թէ բռավօ լսելու ակնկալութեամբ, այլ ձեր
համակրութիւնը զրաւելու մաքով, - որ ազգային
վարժարանը ոչ մի քաղաքական կուսակցութեան

չի պատկանիր, ո՞չ ժողովրդապետականներուն, ո՞չ ազնուապետականներուն, մինչև անդամ և ո՞չ ազատասէրներուն (հայոց-ինքնուն), այլ ազգային վարչարանը կրպատկանի ամբողջ ազգին:

Ապա ուրեմն զպրոցի կառավարութիւնը որի՞ն պէտք է յանձնել: Մեծապատիւ Պարսկայիք, մանկավարժներուն պէտք է յանձնել, ով և լինեն նորա, թէ աստուածաբանիք, թէ լեզուակէտը, թէ բնագէտը, թէ ժողովրդապետականիք, թէ աշխատականիք և թէ այլ ինչ կարգի մարդիկ, միայն թէ նորա ընդ նմին և հանդէ-լորդէ չնենին, միայն թէ հասկանացին՝ թէ ի՞նչպէս պէտք է զեռահաս մատաղ մի համբակէ կատարեալ մարդ զաստիարակել: Սոքա՛ թող լինին մեր ազգային զպրոցի կառավարիչը:

Հասածներէս, համառօտ խօսելով, կրհետեի արդ, որ վարժապետներուն ընաւ չփակոք է արդեւու իրենց զիտութիւնն ուսումնաօրինու, միտքս սրբզիւու համար՝ կողեմ ասել ձեզ, որ ևս միտքանդամնյն հակառակ եմ ոյն պարուներունց որք կ'երկնչին, չըլինի՞ թէ վարժապետները չնիտէ դուրս բան ուսվարեն, և կրկարծեն, թէ սկզնագներու մեջ ծառերու դրսւը պէտք է վերէն հարթ հաւասար խուզել: Քարձապատիւ Պարսկայիք եթէ մեք պարտիզպան ևս լինենիք, ծառերու դրսւիը վերէն հասանելով, որպէս զի նորա յերկինս չի բարձրանան, մեք բնաւ չենինք օգներ մեզ, դուրսով միայն կրթասեմնք ծառերուն, վարդ-հողն և ջուրը այդ է զիտաւոր բանը: Քարի պարտիզպանի փոյթն է հողը, ծառի հիմքը, որ և զիտէ ոյն մշակել: Այդ ասելէ, թէ բանի զօրութիւնը վարժապետաց սկզնական կրթութեան մջէ է, մինչև որ նորա գեռ սեմնար մասած չեն, քանի որ աշխարհս կայ, զեռ ոչ մեկ մարդ շաբիէ դուրս բան ուսած չէ, և ոչ մեկ վարժապետ չափէ դուրս շատ ուսանել կրնալու է: Խմբարհաւած մեծամասնութիւնը՝ ճշմարիտ զիտութեան արդիւնք չըրերէք և չէ, այլ այդ մի յատկութիւն է տեսակ մի մարդոց, որոց զիտութիւնը քայլքայուն կտորներէ միայն բաղկացած է, որը ստիպուած են զասազրի պոչն ամուռ լունել (հաստիւնինեն), որը այդ պատճառով բառ գիրը միշտ առձեռն ունին և ան բանով ինքարուի կրկ սրծին, ինչ որ վերջին

իսկ ոսպէին կարգացած են: Եթէ կամիք, որ զիտաթիւնն և նորա ուսումնի ազատութեան համարնին, թոյլ տուե՛ք մեզ՝ մեր մատրութիւնը Դափն առաջ Սեմինարներու վրայ ուղղել, վնասա վերանորոգել, և անապէս ընդարձակել, որ նոցա մջէն ոչ թէ մեկ առանձին սպասարկութեան համար մեքնեարար կրթուած, այլ մանկավարժական զիտութեամբ միրտուած, այդ դիտութեան ուղղով վառուած մարդիկ գուրա եննեն: Յնուհետեւ կեանք կառնուն մեր վարժապանները զիւղերու և քաղաքներու մջէ:

Երկրորդ ասկլիքս այս է, որ չէ թէ միայն զիտութիւնը հնաւաղօտելու, այլ և նորա արդիւնքն արիշներուն հաղորդելու ազատութիւնն ևս արուած ովիտի լինի վարժապետին: Մանկավարժական զիտութեան իրասուները ու դասերը՝ նա ովարտաւոր է անշուշտ մացնել ազգի մջէ: Գիտութեան ճշմարտութիւնը՝ զնուած զիտոցովներու կամ ուսումնասիրութներու սեփականութիւնը չեն, վերջինքս ովարտեն այդ բառ ցարձակ հրատարակել ՚ի լուր ամենացուն, որպէս զի ազգի հմաստանոյ ու զարգանոյ: Իսկ մեր՝ վարժապետներու մորին ու սրտին: Եւ ոյն պարաները, որք կրտքեն հրամայական քարտզներ կարգալ վարժապետի զինին՝ սահմանելով առջեւէ, թէ այդ մինչեւ այս ինչ էլուր կարող ես գնալ վարժապետի մջէ՝ և ո՞չ հեռուս՝ բնաւ չեն հասկանար, թէ ի՞նչ է զաստիարակութիւնը և ի՞նչ է ուսումնատութիւնը Ավ որ երկար ժամանակ վարժապետի պաշտօն վարած է, ուշադրութիւն չի դարձնել այդ տեսակ պատուեներու վըրայ: Մէկ ժամանակէ, երբ որ որիշներուն դժուար էր յիտազայ խօսքերն արտասանելու, ես համարձակեցաց կոչել հրապարակաւ, „թո՞ղ պօիի սիայի լուսեալ աջ կողմն կանգնէ, և կողակը ձախ կողմն, այնու ամենայնին նորա չեն կարող արգելու ինձ յայտնելու մանուկներուն ի՞նչ որ իմ համարմամբ օդտաւէտ ու բարի գունեմ նոցա համար, ընացելով բւնակալութեան արբանեակներուն, ես կը տպաւորեմ իմ զիտցածս մանուկներուն մորի ու սրտի մջէն: Եթէ մեկ այժմ այժմ այսպիսի հզօր, կենացնացուցիչ ոփի կը տեսնեմք տիրապետած մեր

փառաշեղ մեծ հայրենինաց վրայու ի՞նչ բանի նշան է այդ, եթե ոչ նորա, որ մեր յառաջադիմութիւնն ու ոք կաշկանդել կարող չէ (Բառ-Հէ). և և յօյս ունիմ, որ եթե մենք ամենայն տարիի մեր Գերման նական հայրենինաց հիւսիսային ու հարաւայն կողմերը պյուղիս միասին գումարուելու շարունակենք, մարզիկ վերջապէս կը անմննեն, որ բարի է վարժատան հետ զաշն կապելը ու վարժապետներու հետ ձեռք տուած միասիրս յառաջ գնալը, Մէկ մեծ մարդ, որոյ նման ոչ որ յարդուած չէ Գերմանիոյ մ.ջ (Հումուլժ), մի անդամ ասաց, որ իշխաններու գործունեալ թիւնը վերէն, և ազդի կրթութեան համար տրուած հոգատարութիւնքը վարէն ժամ առ ժամ մէկ մէկու կը մօտենան ու միանալու վրայ են եւ այդ իրաւ այբակէս է: Աւատի ոչ մէկ սիրուլամիլ իրաւունք չունի պատուիրել մեզ, թէ այս ինչ կարող ես և այն ինչ կարող չեմ ուսուցանել. այլ մեր որպէս մանկավարժք՝ ամենանորը խորհրդով մեր աշակերտաց օգուտը իրկար ու ծանր քննելն յետոյ, ինչ որ նոցա ընդունակութեանը յարմար գտնենք, կը տանք նոցա՝ և աշխարհիս վեց չ'ոց մի դորութիւն ու խափանէր մեղ խկապէս այդ տալու, Սահմաններն մեք զիտենք յարկել, սակայն այն տեսակ սահմաններ միայն, որք զրուած են մանկավարժական գիտութեան աղջմամբ:

Աւելին թող զան պարուներն իրենց ընազիտական հիմում էպներով (վարկածներով) մարզկային ազի ծագման վրայ և քարոզին, թէ ինչպէս պէտք է զմարդիկ յատիճանէ յաստիճան բարձրացնել. թող զան ու թողորդուներն իրենց մաշեալ հին կարծեցներով և ասեն, թէ մանկունք ի բնէ ազականուած էակներ են, և թէ անհնարին է դէպի բարին վերածել նորանց. թող զան և այն պարուները, որ մինչև այս օրս զեռ երիս զածութեամբ կը փայտային իրենց կարծիքը, իրը թէ մի աղդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ լոկ պատուանգան կամ աստիճան մի տեսակ իշխաններու կամ զամերու ոտից համար. թող զան և միւսներն և կանչեն, մարզս միայն մի մեքնայ է, գործիք, ակրողութեան ըսկ մասն ու կամ հասարակութեան կոսոր, այլ ոչ անձնաւորութիւն, թող դաշն, մենք նոցա չենք հաւատալու նոցա խօսքերը սուս եւ ա-

թեղ համար իւրաքանչեսիր մանուկ ինքն ըստ ինքնան նպատակ է, մեր գործն է միայն մօտեցնել նորան յԱստուծոյ և կամ ի բնութեանէ նմին սահմանուած վախճանին: Աւրեմն ես կարող եմ եղուափակել, որ մեր ուսումնարանական գործութիւններով սահմանի մէջ պէտք չեն այսուհետեւ այն հրամանները, որք մինչև այժմ զրուած էին մեզ, մանաւանդ այնպիսի մարդոց կողմէն, որք ինքնանը ես չեն կարող իրենց հրամանը կատարել, և չեն կարող — ամենայն համեստութեամբ խօսելով — պիտի լաւ կատարել, ինչպէս որ մենք:

Խօսք դասատուութեան ոճի, կամ եղանակի, մեմորի վրայ է, այդ մեր ասսպարեզն է, մեր գործն է: Թէ որպէս պէտք է աւանդեմ ես աշակերտիս որ և իցէ իմաստուն մարդոց մօքերը, այդ ոչ ոք չունի իրաւունք յառաջ ինձ հրամայելու առանց ինձ անարդելու: Ավ որ չը կամի մանկավարժ ճանաչել զիս, նա միայն կը տայ ինձ այդպիսի հրաման, իսկ ով որ զիս կը ճանաչէ, գործը լեռնին ինձ կը յանձնէ, կամիմ ասել — վարժապետին: Տարօրինակ ու մեր յաջորդներուն մի զարմանալի երեցի կարող է թուել, որ մեզ մեր գործի համար ոչ թէ օրէկըներ ու կանոններ կը սահմաննեն, որք գոյցէ սահմանողներու կողմը համոզմամբ բարի հետեւանք կարող են ունենալ, այլ նա և գործիքներ կուզեն զնել մեր ձեռքը՝ և ասել, թէ աշաւասիկ այս հերիւնով և այս ինչ ասեղով պէտք է որ բանիս, և կամ որ նոյն է, այս ինչ պատուերի մէջ միշուած զըրով, ընթերցարանով ու քրիստոնէականով: Ավ է կուզեն, որ ես սրտի մըտօք ու յաջողակ դաս տամ, ապա ուրեմն հարկ է որ գասատուութեան միջոցները ես ինքս ընտրեմ: Ավ որ զառաջին կը պատուիրէ ինձ զնոսա, կը կարծէ թէ ես բան չը հասկանամ: բայց եթէ ես բան չի հասկանամ, պէտք չէր՝ որ նա ինձ պաշտօն տայ. իսկ եթէ տուած է, ուրեմն ինքը բանի էտիմիւնը ըմբռնած չէ և իր պարտքը կատարած չէ: Խօսքիս Արիգուլաթիմիի զէմ չէն (Ճշճառ և հաւատանիւն): Պարսնոցը, ես մի անսակ յարգանք ունիմ ու իդուլաթիվներու համար. իմ կարծիքով նորա համոզման արդասիք են և իրեւ այլպիսիք՝ պատոյ արժանիք: նոցա մ.ջ ևս

Ճշմարտութեան ու բարւց նշալիներ կան Սակայն և այնպէս, ես չեմ կրնար նոքօք գործ կատարել. այլ ով որ ոեգուլամիլի համոզմունքն ունի, դոցէ զնոսա յարմար գործիք տեսնէ. իսկ ինձ համար ոգեւոր կեանքի, ճշմարտութեան սահմանի մեջ ամենեին ոեգուլամիլ չըկայ. և ո՛վ որ կը յանդինի ճշմարտութիւն որոնելու ու քարոզելու համար Արդուլամիլներ հանդես հանել չէնա ի ճշմարտութեանէ, այլ հակառակ ճշմարտութեան. Թերեւս զուք հարցնէք՝ "Արելի ընկեր, եթէ ամենեին ոեգուլամիլ չը լինի, ինչով առաջնորդուիք, շատ բաներ կան, որոց մեջ մեզ խրատ հարկաւոր է, ուրեմն բարի ուղեցցց մի պէտք չէ արհամարհիլ".

Ես ևս չեմ արհամարհիլ. իմ սովորութիւնս է, որ եթէ բանիրուն ու խելացի մի մարդ իմ դէմ ելլէ, ամենայն մոտադրութեամբ լսել նորա խօսքերը, և եթէ նորա միտքը բարի է, զնոսա ի բոլոր սրտէ ընդունել. Բայց ես զիտիմ և ուրիշ մի հնար, որով կարելի էր զշմարտութիւն, որպէս և ժողովրական, նոյնպէս դպրոցական կեանքի մ.ջ յաղթանակի հանցնել, ու վերջապէս միայն ճշշմարտին ու բարւցն ընդհանրական տիրապետութիւն շնորհչել. Այդ մէկ հնար է, որ ընառ զրամ չի ուզեր, բնաւ հոգս չի պահանջեր, որ ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ խրագանչեւր մարդոյ սրբազան պարտքը—իր արարքն ու գործելը այնպէտ կարգաւորել, որ ոչ մէկ մարդոյ առջև տեղիք չունենայ կարմիրեւր կամ ամաչելու, մէկ խօսքով, դրոցի բարուդրումը տրաւած է տարապայման հրապարակութեան մեջ (իիւրլիզիթէ).

Երբոր խրագանչեւր մարդոյ աչք դպրոցի վրայ ուղղուած լինի, երբոր ամեն մէկ վարժապետ ո՛չ թէ միայն իր խղճի ու Աստուծոյ աշաց առջև, այլ մարդկային աշաց առջև գործ կատարէ, երբ որ ամեն մէկ մարդք ամենայն ըոսէ կրնայ ներս մտնել ու վարժապետի արածը տեսնել, այն ժամանակ վարժարանը երբէք չը տեսնուած բարձրութեանը կը հանի, Այդ հրապարակութիւնը մէք զեռ շուտով չենք ստանար, ուրեմն յարգելի պարսնայք և տիրնայք, աշխատեցէք ամենայն զօրութեամբ՝ որ վարժարանի հանդամանքները շուտով ընդհանուր հասարակացին զորեւ դառնան, ուերութեան և

ազդի առաջին գործը դառնան. զարթուցէք հայրերու ու մայրերու փոյթն ու մէրը վարժապետեան համար, որպէս զի նորա առանց բացառութեան ամենքը միասին խնամք քաշեն նորա վրայ. Այսուհետեւ ոեգուլամիլներու համար զործածուած թուղթը մէկուսի կը զրուի, վարժարանը կը ծաղկի և կը դառնաց ճշմարիտ ուսումնարան, հաստատուն հիմք մեր աղջային օգտին և փառաց Տացէ Տէր, որ մէք արժանանակը այդ երջանիկ օրի տեսութեանը, որոյ շատ մօտենազուն մանաւանդ նորա աւելի պիտի տեսնան, որը մինչև այժմ՝ թէ ձախ ու թէ յաշ կողմէն զիզուած անասելի արդելքներու տակ, երկար տարիներ արթութեամբ վաստակած են. Արեմն միարան հաստատուն միանք այս վճռի վրայ, որ գոյրոցը հասարակային կեանքի վեհագոյն և սրբազնազոյն գործն է, և որ մէք զաւակները նորամով միայն կարող են երջանիկ մարդ դառնալ.

Մեծապատիւ պարոնայք, աւասիկ ես զրկիթէ վերջացուցի ի՞նչ որ մէք աղջային օրէնքի հին որոշման նկատմամբ ասել կը ցանկայի. սակայն ես չեի կամենար, որ մէք բաժնուելինք մեկ զմեկէ մի քանի փոխադարձական կարծիքներ չե յայտնուած. ուստի թոյլ տուէք ինձ աղաւամ, առաջարկել Զեղ յետազայ թէղաները (զրութիւնք), և լսել Զեր որոշումը նոցա մասին. Այդ թէղաները յառաջացած են նոյն իսկ մոյքերէն, որ ես շնորհ ունեցայ յայտնել Զեղ, և են

1) Մինչեւ այժմ շատ սեմինարներու մեջ վարժապետական կրթութեան վրայ դրուած ճնշմունքը ի բաց մէրժելի է:

Ես ի մոի ունիմ այս տեղ այն կապանքը, որք դրուած են՝ մանաւանդ մանկավարժական զիտութեան վրայ (պետագողիա). Սեմինարներու անունն է վարժապետաց ուսումնարան. բայց տեսնէք, այն իսկ զիտութիւնը որով մարդս վարժապետ կը կրթուի, այսինքն մանկավարժութիւնը, բայց մէծի մասին արտաքսուած է նոցա մէջէն. շատ սեմինարներէն դուրս ձգուած են նոյնպէս զիտութեան և այն ճիւղերը, որք մանկավարժութեան բուն հիմունքն են, օրինակի համար, հոգեբանութիւնը. Այդ պատճառ կը տայ ինձ ինդուկտ Զեղմէն, որ դուք ձայնակցիք իմ թէղային.

Արդ 2եր մտաղրութիւնը յատկապէս մանկաւ վարժութեան վրայ դարձնելով, շնորհ ունիմ առաջարկել 2եղ, որ

2) Դասատուական ոճի (մեթոդի) և գասագրքերու ընտրութիւնը վարժապետներուն պէտք է յաձնել. գլորոցներու միօրինակութիւնը այդ կողմանէ նոյնպէս մերժելի է. Մեզ ամենքիս յայտնի է պարոններ, թէ որ և է վատ զրբի տեղ՝ շատ անգամ վերէն ուղեցած են մէկ ուրիշը, աւելի լաւը մոցնել վարժարանի մէջ. Աերէն նշանակուած զրբի վրայ քննութիւն անել չը կամիմ. բայց և այնպէս՝ թէ իմանայի, որ նա շատ պատուական զիրք է, ես չէի կամնար նորա ներածուելը բովանդակ երկրի կամ նահանդի մէջ. Վատ զիրքը կարող չէ երկար դիմանալ, եթէ հասարակութիւնը հսկէ դպրոցի վրայ. և փոքր ինչ լաւ զիրքը կարող է գեղեցիկ սպաս մատուցանել, եթէ վարժապետն ինքը բանիմաց մարդ լինի. Իսկ եթէ վարժապետն անպիտան է, ամենալաւ զիրքն ես կը մնայ անպիտան:

Դպրոցական օրէնսդրութիւնը պէտք է որ վարժարանի գործունէութեան փարբազցն չափը (մինիմում) միայն սահմանէ, ասելով, թէ վարժապետը պարտաւոր է չէ՛՛ այս ինչ և այն ինչ կատարել. որովհետեւ տէրութիւնն ու ազգը պէս պէս պահանջմունքներ ունին, և վարժարանի պարտաւոր է նոցա համապատասխանել. Աւելին վերէն հաստատուած մի կարդ ու կանոն հարկաւոր է. սակայն, ինչպէս առաջ ես ասայի, թօնդ վարժարանը վերջապէս աղատ լինի տալու աշակերտին այնքան, ինչքան որ կարող է տալ. Վարժարանի գործունէութեան մեծազցն չափը (մաքսիմում) առաջուց սահմանել պէտք չէ. պէտք չէ ասել, թէ "Դու մինչեւ այս կէտը ունիս իրաւունք հասցնելու աշակերտը, իսկ աւելի չեւու - ոչ . ո՛վ որ այդ անէ, մեզապարտ է". Պարօնայք իմ, այդ մի տեսակ շարագործութիւն է մանկութեան դէմ. եթէ մի մանուկ առօրեայ հասարակ մակերեւութիւն գեպի վեր բարձրանալու ընդունակ է, թէ նշունչել զնա և ասել, "այս դպրոցի մէջ միայն այսքան, ոչ աւել և ոչ հեռու":

Ուստի ես կառաջարկեմ 2եղ երրորդ զօրութիւնո, թէ

3) Դպրոցական օրէնսդրութիւնը թօնդ ուսումնարաններու գործունէութեան փորբազցն չափը միայն հաստատ որոշէ, բայց այդ չափէն անցնելը ու մէկ ուսումնարանի թօնդ չարգիլէ.

Գալով այժմ այն գրութեանը որ ուղղակի կը վերաբերի մեզ, որպէս մանկավարժ անձանց, կը խնդրեմ ընդունել, որ

4) Դպրոցի կառավարութիւնը կարող է միայն բարեկանալ մարդոց գործակցութեամբ կատարուիլ, և նորա վերատեսչութիւնը միայն վարժապետներուն յանձնուիլ:

Ես բնաւ չեմ կարծեր, որ զպրոցը վարժապետներուն կը պատկանի. եթէ նորա այդ կարծիքն ունին, շատ ցաւելի է. ոչ թէ զպրոցը մեզ համար է, այլ մեք դպրոցի համար ենք. Սակայն մեք՝ եթէ կամնանք մեր պաշտօնը ճշտիւ կատարել, ուետք է իմանանք, թէ ո՞ն է լաւ դպրոցը. և ո՞ն է վատը. Եւ եթէ հարկաւոր համարուի ուղարկել մի ոք վարժարանի գործերը քննելու, պէտք է որ այդ մարդն անշնչառ վարժապետ լինի. Ուրիշ մի մարդ ես կարող է շատ բան տեսնել, օրինակի համար, արդեօք աշակերտները լաւ կը զրեն, քաջ բերան կ'ասե՞ն, զասերը զուրի պէս կը սերուն ն, ճիշտ համրել զիտսե՞ն. Բայց վարժարանի մէջ մէկ ուրիշ՝ առանձին տեսնելու բան ես կայ, մի բան՝ որ միշտ վարժապետը միայն կարող է տեսնել, — այդ է ոգին, որ՝ եթէ ներուի ասել, աշակերտաց աչքերու մէջն առ մեզ կը շողայ, որ արտաքս կը փայլի վարժարանի մէջ տիրող եղանակէն (թօն), վարժապետի հէֆէն (շդիմմունգ, զիսիուզիսիոն), աշակերտաց ու վարժապետի կենակցութենէն, նոցա փոխազարձ յարաբերութիւններէն ելն. Հարիւր մարդ ուղարկեցէք վարժատուն, և նորա այդ ամենէն կը տեսնեն և ոչինչ ու կը վերաբառնան գէպ ի տուն այն ուղևորի նման, որ ճամբու. վրայ թէ և շատ անտառնիրու և լուներու հանդիպած է, սակայն ոչինչ տեսած է. Իսկ ուղարկեցէք զմեղ այն տեղ, և մեք առանց շատ խօսելու իսկոցն հարիւր նկատմունքներ կանենք և կարող կը լինինք ասել, աւասիկ այս է վարժարանի վիճակը. Վարժարանի վերատեսչութիւնն միայն վարժապետաց միջնորդութեամբ հարկ է կատարել:

ես կ'առաջարկեմ Զեղ այլ ևս մէկ զրութիւն, որց մասին ես շատ բան չ'ասացի և ասել ես չե՛ ուզեր. ես կը ցանկայի աւելի, որ զա առանց երկար բարակի իր ճշմարտութեամբ միայն 2եր հաւանութիւնը գտներ, այս է:

5) Վարժարանը ո՞չ թէ մէկ կրօնական կամ քաղաքական կուսակցութեան գործ է, այլ բովանդակ աղջի:

Թերեւս օգտակար, գուցէ և հարկաւոր երկրօնի զասատութեան վրայ խօսք բանալ այժմ, բայց ես կը հրաժարուիմ այդ խնդրէն և կը ցանկամ՝ որ գուք զրութեանս մասին ձայն չ'արկանէք, թէ որ դա իր ներքին համապեցուցիչ զօրութեամբ անմիջապէս 2եր վրայ չը ներկործէ: Մեկուսի թողնելով այս թէզան, ես կը զամ վնրջինին, որ է:

6) Գպրոցական գործերու բարուսփիշն է տառապայման հրապարակութիւնը (լա բիւպիզիթէ, պубличность):

Այդ զրութեամբ մէք յայտնեցինք, թէ ի՞նչ պէտք է անել վարժարանները բարձրացնելու համար, մէք չը կամինք նույնուն եւու խաղալ մէք հիմնարկութեանց հետ, այլ կը ցանկանք զնոսաքանդակ աղջի առջւ աղատ և բաց դնել: Այժմ ես չեմ կրնար ասել, թէ ի՞նչպէս պէտք է հատարել այդ, թէ ինչպէս պէտք է մացնել այդ Պրուսիոյ, Սակոսնիոյ կամ Ֆրանսիայի մէջ. Խնդիրն այժմ դորա վրայ չէ: Բայց երրոր գպրոցական կեանքն ամենայն տեղ բաց դրաւած լինի, բարի եռանդ ու վեճ կը շարժի աղջերու մէջ, որք կը սկսին մէկ մէկու ճակատ առ ճակատ պատերազմ տալ, և ամենասուր զէնքերու ձեռնարկանել: Այդ զէնքերէն արիւն չի թափուիր ՚ի հարկէ, այլ մոքելու ու ողիք մէկ մէկու զէմ կը նետուին, և մենք կ'ատենք, ահա տեսէք, այն տեղ լաւ է, այն տեղ կարող ենք նույներէն, Փրանսիացիներէն բան ուսանիլ: Սակայն նախ և առաջ մէք կը ցանկանք ամենալաւն այս տեղ ուսանիլ՝ Պրուսիոյ, Գերմանիոյ մէջ ընդհանրապէս: Աթէ այդ աղջպէս է, ուրեմն վարժարանի գուռն չը փակնք, ու մամուլի միջնորդութեամբ, որ նոյնպէս վարժարանի գանձակիցն է, նորա ցաւերը հրապարակու քարողները: Աղջի մէջ այնքան սէր կայ վարժարանի համար, որ եթէ մէք նորա ցաւերն

ու վէրքերն յայտնապէս մերկայննեմք աղջի առջւ, վատահ եմ՝ որ տրտերն ու քաակներն խեցյն կը բացուին և վարժարանը կատանաց՝ ինչ որ արժան է տալ նորան: Տացէ Տէր՝ որ այդ շուտով կատարուիր: (Հայութական լուսութանակ կատարուիր:)

(Անոյցն է յաշուրու աշամագիրաւ:)

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ԴԻՄԱՌՆՈՒԹԻՒՆ

Աղու քոյ աւաշ զբազումն զարթուցին:

Աշուրմիեր տատրակ զյօգսուստ ինքնին:

Արդիքք մէջ միայն ցաւ քո աղջեցին:

Թէ համհարդ որդուց Հայոց աշխարհին:

Աէս անդութ անգեղ բաղեցից երամք:

Դաւաճանք սրբոց ծարաւիր արեան:

Տեղ ասեմք անշուշտ՝ ձեղ ասեմք յանկարծ:

Էմբոնիլ ՚ի հաղը առնուլ փոխադարձ:

Հաւիկ գեղեցիկ բազմափորձ թուչիկ:

Միակ վշտացեալ սրտիւ հանդարտիկ:

Սակաւ մի ժուժեան կաց դու միսիթար:

Բարօրիա զկնանս յուսով լնդ երկար:

Զիք վրէժ անմեռդ չիք յայսմ աշխարհի:

Զիք յանանց ՚ի կեանս ըստ կամաց հասաւչն:

Թէւ անազան յայտ զայ միանդամ:

Անդարձ սատոկազին վճիր տիրական:

Բայց ասա պատմեան որ ինչ անցք անցին:

Միայն զնառութց միշեա երկինքը պատմեն:

Որ կամք կարէ փրկէ զփիրելին:

Ցական թօթափիլ բուժէ ցցաւալին:

Զի զփառս Աստուծոյ միշտ երկինքը պատմեն:

Խւ երկիր խոնարհ նմին ձայնակցի:

Որ սիրտ և բերան չէ գոչ զնմանէ:

Որ զյակ զգաստ յարտուղի ցնդէ:

Այն ինչ ՚ի կայանս ասէ յապահով:

Զօրհնութիւնս և փառս երշէի հոգւով.

Յանկարծուստ ինձ հաս զուժկան սուրհանդակ:

Ցիսոց երամոց գոշիւն աղաղակ: